

կապակցութիւններում՝ Մ. Արեղեանը տառեխ է վարդապետութեան համարում է մականուն վերադիր, որոնք կարող են լինել մի ածական, մի դոյական, մի մակբայ: Նոյնանման երեւոյթ նկատում ենք ռուսերէնում: Ս. Բարխուդարովն ու Ս. Կրիւչկովը դպրոցական դասագրքում Река, Дон, Город Рига, Инспектор Петров բառադոյերում Դոն, Ռիգա, ինսպեկտոր բառերը համարել են բացայայտիչներ (Приложение)⁵⁶: Պրոֆ. Գ. Սեւակն իր դպրոցական դասագրքում այդ կարգի բառերը համարել է որոշիչներ⁵⁷: Այստեղ մեզ համար կարեւորն այն է, որ Սեբաստացին շատ վաղ անցեալում սաղմնային ձեւով, եւ որոշ դէպքում առանց տարբերակման, նախանշել է յատկացուցիչը, բացայայտիչը եւ որոշիչը, որոնք հետագայ քերականների կողմից մշակուելով ու ճշգրտուելով մտել են մեր շարահիւսական համակարգում՝ որպէս ենթակայի կամ նախադասութեան այլ անդամի լրացումներ:

դ) Որոշիչ

Արբաճօր աշխատութեան մէջ Հկայ որոշիչի, իբրեւ շարահիւսական առանձին միաւորի, հասկացութիւնը: Սակայն, շարահիւսական վերլուծութիւններում այդ մասին առանձին ակնարկ է արւում. Սեբաստացին որոշիչը իր եզրով դեռեւս չի տարբերակում ածականից. նրա մօտ այդ երկուսը հանդէս են գալիս միաձուլուած. սակայն ըստ էութեան դա շարահիւսական այն միաւորն է, որին այժմ ընդունուած է անուանել նախադասութեան երկրորդական անդամ՝ որոշիչ: Օրինակ՝ «Իսկ բարեսէր նախարարն Հայոց, իբրեւ տեսին... եւ այլն» նախադասութիւնը վերլուծելիս, քերականը գրում է. «Ահա ի սմին բանի (իմա՝ նախադասութիւն) նախարարին է անուն բայի (իմա՝ ենթակայ), բարեսէր՝ ածական նորին, եւ Հայոցն է յատկացուցիչ նախարարաց եւ այլն»: Ասածից պարզ է, որ բարեսէր բառը ենթակայի (նախա-

րարքն) որոշիչն է, ցոյց է տալիս նրա յատկութիւնը, որպիսութիւնը:

Մի այլ օրինակ. «Պետրոս առաքեալ զնաց ի Կեսարիա» նախադասութիւնը վերլուծելիս՝ Սեբաստացին առաքեալ բառը համարում է ածական: Քանի որ Սեբաստացին նախադասութիւնը վերլուծում է ըստ նախադասութեան անդամների (Պետրոս - տէր բայի, զնաց - բայ, ի Կեսարիա - խնդիր բայի, առաքեալ - ածական), ապա տարակոյս Հկայ, որ ըստ նրա ածականն այս դէպքում որոշիչն է: Բանն այն է, որ այդ շրջանում շատ հարցերի հետ միասին Հկար տարբերակում նաեւ ածականի եւ որոշիչի միջեւ. ձեւաբանական եւ շարահիւսական հասկացութիւնները այս հարցում էլ հանդէս էին գալիս միաձուլուած:

Մէկ այլ փաստ: Սեբաստացին թուականի մասին առանձին չի խօսում. այլ՝ ածականի կապակցութեամբ: Ածականը, ըստ Սեբաստացու ցոյց է տալիս դոյականի որպիսութիւնը եւ որքանութիւնը, այսինքն՝ յատկանիշը եւ թիւը: Այս հարցում էլ Սեբաստացին նախադրեալ է ըստեղծել որոշիչի ճիշտ ըմբռնման համար, որից ելնելով էլ հետագայ մեր քերականները ճշգրտել են որոշիչի դերը, այդ հասկացութեան տակ պատկերացնելով դոյականով արտայայտուած ենթակայի կամ նախադասութեան այլ անդամի որակը, որպիսութիւնը, չափն ու քանակը ցոյց տուող լրացումները: Որոշիչի այսպիսի ըմբռնումը բառացիօրէն համընկնում է Սեբաստացու բնորոշմանը, եւ սա պատիւ է բերում Արբաճօրը, որը 238 տարի առաջ՝ ճիշտ է նկատել մեր լեզուի շարահիւսական օրինաչափութիւնները:

ե) Ստորագեալ

Սեբաստացու մօտ այսօրուայ յորջորջումով Հկայ նաեւ ստորագեալ եզրը: Սրա

56. С. Г. Бархударов и С. Е. Крючков, учебник русского языка, Москва, 1965 г.

57. Գ. Սեւակ, Հայոց լեզուի շարահիւսութիւն, Երեւան, 1965, էջ 44-45:

փոխարէն նա գործածում է բայ եզրը, եւ դրա տակ հասկանում է. «Բայն է մասն բանի» որ դառն եւ կամ զկիրս էութեան ընդ ժամանակաւ նշանակէ: Ասացի դառն եւ կամ զկիրս էութեան նշանակէ, քանզի ո եւ իցէ բայ, կամ դառն, այսինքն դարս եւ զգործս էութեանց նշանակէ. որդոն՝ քահանայն աղօթէ. եւ կամ զկիրս էութեանց նշանակէ. որդոն՝ Պօղոս սիրի, փայտն այրի, Պետրոս խօսի եւ այլն»⁵⁸:

Ինչպէս նկատում ենք՝ այս հարցում էլ, սակայն ոչ Միխիթար Սեբաստացու մեղքով, Հկայ տարբերակում ձեւաբանական եւ շարահիւսական ըմբռնումների միջեւ: Սա հարցի միայն ձեւական կողմն է: Ըստ էութեան՝ բայ եզրը Սեբաստացին գործածում է արդի ըմբռնմամբ ստորագեալ հասկացութեան փոխարէն: Յատկապէս քերականական վերլուծութիւնների ժամանակ՝ նա որոշակի ցոյց է տալիս, որ բայ ասելով՝ հասկանում է նախադասութեան այն դիւաւոր անդամը, որը գործողութիւն կամ եղելութիւն է ցոյց տալիս: Այսպէս, շարահիւսական եւ ձեւաբանական ըմբռնումների միջեւ եղած դեռեւս ոչ յստակ տարբոյնումը կամ տարբերակումը դալիս է շարահիւսութեան վերաբերեալ համաշխարհային տարտամ ու սխալ ըմբռնումից: Չնայած քերականութեան այդ իրաւագոր բաժինների եզրերի տարբերակման բացակայութեանը, Սեբաստացին ըստ էութեան տարբերում է շարահիւսական ըմբռնումը ձեւաբանականից: Այսպէս, երբ Սեբաստացին նախադասութիւնը վերլուծում է ըստ նախադասութեան անդամների, հանդէս է գալիս նրա շարահիւսական որոշակի ըմբռնումը եւ այդ երկու բաժինների տարբերակումը: Օրինակ՝ «Այր ում բարեմիտ եւ աստուածաւեր յանկարծակի խաբեցեալ ի դիւէն՝ վասն երկիւղի մահուան ստաբար երդուաւ ի սուրբ անուն Տեառն Աստուծոյ, յորմէ երկինք եւ երկիր դողան, եւ գկնի երդնոյն, քանզի ոչ ունէր զխաւսիչ, յուսահատեալ ի կեանաց՝ անկաւ ի վերայ սրոյ իւրոյ, եւ մե-

ռաւ» նախադասութիւնը վերլուծելիս, այրը համարում է անուն բայի, երդուաւ՝ բայ, տեառնը՝ խնդրի յատկացուցիչը, Աստուծոյ՝ բացայայտիչ տեառն բառի, իւրոյ բառը՝ սուր բառի ածականը, որն ըստ էութեան յատկացուցիչ է: Մէկ այլ օրինակ. իսկ բարեսէր նախարարին Հայոց, իբրեւ տեսին զՍորմակ սուտանուն քահանայն նստեալ ի վերայ արքայ սրբոյն խնակայ, ի սիրտ եւ ի յոգի խոցեցեալ ուշագնաց եղին, գորմէ չարաւեր նախարարին առնէին զխախտութիւն հանգոյն խախտութեան քագաւորի, առ գովացումն տապոյ նախանձուն իւրեանց նախադասութեան վերլուծութեան ժամանակ՝ քերականը գրում է. «Ահա ի սմին բանի նախարարին է անուն բայի, բարեսէրին՝ ածական նորին եւ Հայոցն է յատկացուցիչ նախարարաց եւ այլն»: Նոյն կերպով, Իսահակայ՝ յատկացուցիչ, և արքայոյ՝ յատկացեալ, քագաւորի՝ յատկացուցիչ, խախտութեան՝ յատկացեալ եւ այլն: Մեր ասածը հաստատում է Մ. Սեբաստացու մէկ այլ պնդումով, որտեղ նա շատ աւելի որոշակի է դրսեւորում իր շարահիւսական ըմբռնումները: Խօսելով բայի (ստորագեալի) եւ անուն (ենթակայի) համաձայնութեան մասին՝ նա գրում է. «... դիտելի է, զի համաձայնութիւնս այս՝ գործմէ խօսիմք լինիլ բայի ընդ անունն, ոչ միայն իմանի զանունն, որ գէութիւնս իրաց նշանակէ, այլ նաեւ զայլոց ոմանց մասանց բանին, որք կարեն անունանալ, եւ կամ փոխանակ անունն լինիլ՝ եւ ստորակացուցանել անուն բայի ուրուք: Վասն որոյ թէ դերանուն իցէ, թէ ընդունելութիւն, եւ թէ բայ աներեւոյթ, կարէ գոյ անուն բայի...»⁵⁹:

Այս միտքը քերականը աւելի է զարգացնում ասելով. «Եւ եթէ մնացեալը մասունք բանին նիւթականապէս առնանիցին, այսինքն ընդ որում են բառք ոմանք՝ եւ ոչ ըստ որում մասունք բանի (ընդգր-

58. Մ. ՍԵԲԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 302:

59. Մ. ՍԵԲԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 373:

ծումը մերն է — Յ. Մ.) նաեւ նուրբին կարեն լինիլ անուն բայի»⁶⁰ :

Այս տողերն այնքան յստակ ու արդիական են հնչում, որ ահամայ յիշում ենք ժամանակակից քերականների ճիշտ եւ ճիշտ նոյն սահմանումը: Բերումա՞ծ փաստերը աներկբայորէն հաստատում են, որ Աբբահայրը մի քանի հարկերամեակ առաջ ոչ միայն պարզորէն տարբերակել է շարահիւսական ու ձեւաբանական հասկացութիւնները, այլեւ այս հարցում ուղեցոյց է դարձել մեր արդի քերականների համար:

Եզրակացութիւն. — Նախադասութիւնը վերլուծելիս՝ Սերաստացին ելնում է ձեւաբանական հասկացութիւնից, նշում է շարահիւսական մի շարք եզրներ: Չնայած աշխարհի շատ ու շատ երկրներում, նոյնիսկ ամենազարգացած երկրներում դեռեւս չէին տարբերակուած ձեւաբանական ու շարահիւսական ըմբռնումները, Միխիթար Սերաստացու մօտ շարահիւսական բաղմաթիւ տարրեր արդէն որոշակիորէն առկայ էին, որոնք էլ հենց հետագայ քերականների համար հիմք են դառնում շարահիւսութեան իրողութիւնները մշակելիս ու ճշգրտելիս:

* * *

Սերաստացու քերականութեան արժանիքներից մէկն էլ այն է, որ նա ճանաչում է բայի զեղչման փաստը: Լեզուի զարգացումը, նրա ներքին օրինաչափութիւնների կարգաւորումը, խօսքի յղուումը եւ մշակումը մարդկանց բերում են այն համոզման, որ որոշ բառերի յաճախակի կրկնութիւնը կենդանի խօսքի մէջ աւելորդ է, եւ ոչ տեղին, որովհետեւ ճապարհեցնում է խօսքը եւ այն ծանրաբեռնում աւելորդութիւններով: Եթէ այդ բառերը չստուեն կամ չգրուեն, միեւնոյն է՝ կենդանի խօսքի ընդհանուր կապակցութեան մէջ դրանք կ'ընկալուեն. մինչդեռ լինելու դէպքում՝ խօսքը զրկում են հնչեղութիւնից: Ելնելով սրանից՝ մար-

դիկ ձգտում են խօսքի միջից կրճատել, զեղչել այն բառերը, որոնք անհարկի բաղմաթիւ անդամ կրկնում են: Այս կարգի համաձայն, խօսքի միջից զեղչում են նաեւ կրկնուող բայերը: Նկատի ունենալով մեր լեզուի ներքին օրինաչափութիւնները՝ Սերաստացին եզրներ է սահմանում առկայ եղած եւ զեղչուած բայերի համար: Երբ նախադասութեան մէջ բայն առկայ է, հեղինակն անուանում է «ներդործութեամբ եղեալը», իսկ երբ զեղչուած է՝ «զօրութեամբ եղեալը»: Բերենք մի քանի օրինակ:

ա) Ներդործութեամբ, այսինքն՝ երբ բայն առկայ է նախադասութեան մէջ: «Բահանայն աղօթէ: Պողոս սիրի: Փայտն այրի: Պետրոս խօսի: Արածէին այծք վայրենիք ի լերինս: Վերացուցանեմ ըզքարն ի յօդս եւ այլն»:

բ) Զօրութեամբ, այսինքն՝ երբ բայը նախադասութեան մէջ չկայ, զեղչուած է, սակայն մտքով վերականգնում է:

«Մեք յիմարք վասն Քրիստոսի, եւ դուք իմաստունք ի Քրիստոս»: Բայի վերականգնած ձեւով՝ այս նախադասութիւնն այսպիսի կառուցուածք կ'ունենայ. «Մեք լիցուք յիմարք վասն Քրիստոսի, եւ դուք լերուք իմաստունք ի Քրիստոս»⁶¹:

Կամ «Ո՞ր դիմես: — Առ Քրիստոս»: Բայի վերականգնած ձեւով՝ երկրորդ նախադասութիւնը կը լինի՝ «Առ Քրիստոս դիմեմ»:

Սերաստացին չնայած չի նշում, սակայն բերում է այնպիսի օրինակներ, որոնց մէջ կան զեղչուած այլ անդամներ եւս. այսպէս՝ «Որո՞վ կարես յաղթել փորձութեան: — Ծնորհիւ Տեառն»: Այս օրինակից երեւում է, որ կենդանի խօսքի մէջ առկայ էր նաեւ նախադասութեան այլ անդամների կրճատման, զեղչման փաստը: Օրինակ, պատասխան նախադասու-

60. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում:

61. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 371-375:

թեան մէջ՝ զեղչուած է ոչ միայն բայը (կարեմ), այլեւ դերբայը (յաղթել) եւ խնդիրը (փորձութեան):

* * *

Աբբահայրը միանգամայն ճիշտ է նկատել, որ նայած նախադասութեան ընդթիւն ու իմաստին, միեւնոյն նախադասութեան մէջ կարող են դործածուել տարբեր եղանակի բայեր. ինչպէս՝ օրինակ, հրամայական, սահմանական, աներեւոյթ: Այդ առթիւ դրում է քերականը. «Գիտելի է զի երբեմն ի միում բանի բազում եղանակք բայից դտանին» և բերում է այսպիսի օրինակ.

«Եթէ կամիս մտանել ի կեանս, պահեա՛ զպատուիրանս: Ահա աստէն երեք եղանակք բայից մտին, այսինքն՝ ստորակցական, աներեւոյթ եւ հրամայական»: Մի այլ օրինակ. «Ո՛ւշ դիր հասկանալ, զոր ասեմ»: Այս նախադասութեան մէջ էլ երեք եղանակի (հրամայական, աներեւոյթ եւ սահմանական) բայեր կան: Քերականը այս փաստերով ցոյց է տալիս, որ միեւնոյն նախադասութեան մէջ տարբեր եղանակի բայերը շարադասում ու համաձայնեցում են միմեանց՝ ելնելով նախադասութեան ընդհանուր մտքից ու նպատակից:

Բացի այս, Սերաստացին բայերը տարբերակում է նաեւ ըստ սեռի. նա ճանաչում է չորս սեռի բայեր՝ ներգործական, կրաւորական, չէզոքական եւ հասարակ: Ներդործական է համարում այն բայերը, որոնց կատարած գործողութիւնը անցնում է ուրիշ առարկաների վրայ (զարեարեմ, լնում). կրաւորական, երբ գործողութիւնն իր վրայ է կրում ենթական (զարգարիմ, լնանիմ). չէզոքական, երբ գործողութեան համար որեւէ առարկայ չի պահանջուում (ննջեմ, խնդամ, լիանամ, աճիմ). հասարակ, երբ կարող են հասկացուել տարբեր ձեւով. այսպէս՝ խոստովանիմ, որ նշանակում է, թէ ես որեւէ մէկին եմ խոստովանում, կամ որեւէ մէկից եմ խոստովանում:

* * *

Սերաստացու մօտ կայ նաեւ բաղադրեալ ստորոգեալի գաղափարը: Նա նկատել է, որ նախադասութեան մէջ միշտ չէ որ բայը միայնակ է հանդէս գալիս իբրեւ ստորոգեալ: Օրինակ՝ բաղադրեալ ստորոգեալ կարող են կազմել գոյականը, ածականը, թուականը, դերանունը եւ այլ բառեր: Եթէ առաջին դէպքում բայը միայնակ կարող էր յատկանիշ արտայայտել եւ այդ յատկանիշը վերագրել ենթական, այսինքն՝ ստորոգում կատարել, ապա երկրորդ դէպքում յատկանիշն արտայայտում են գոյականը, ածականը, թուականը, դերանունը եւ այլ բառեր. իսկ այդ յատկանիշը ենթականին վերագրում, այսինքն՝ ստորոգում են կատարում վերացական բայերը: Այսպէս, բաղադրեալ ստորոգեալի մաս կազմող բառերը (որոնց Մ. Աբեղեանը ստորոգելիական վերադիր է անուանում) ենթականին կապող, ստորոգող հանգոյցը, այն է վերացական բայերը միասին կազմում են բաղադրեալ ստորոգեալ: Իբրեւ բաղադրեալ ստորոգեալ պարունակող նախադասութեան օրինակներ Սերաստացին բերում է հետեւեալները. «Ծանր է քարն, դառն է օշինդրն»:

Քերականը ստորոգելիական վերադիրները համարում է ընթերցան խնդիր, այսինքն՝ անուղղակի խնդիր: Հայ քերականագիտութեան մէջ ընթերցան խնդիրն ունի իր որոշակի սահմանումը. նա ցոյց է տալիս ա) այն առարկան կամ իրը, որին մօտենում, մատուցում կամ հանդում է ենթականի գործողութիւնը եւ դրում է տրական հոլովով, բ) որից բաց է առնում, սկսում, անջատում եւ հեռանում է այդ գործողութիւնը եւ դրում է բացառական հոլովով. գ) որի միջոցով կամ օժանդակութեամբ կատարում է այդ գործողութիւնը, եւ դրում է գործիական հոլովով:

Մինչդեռ ստորոգելիական վերադիրները (բաղադրեալ ստորոգեալի մաս կազ-

62. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 208:

մող զոյականը, ածականը, թուականը, գերանունը եւ այլն) ենթակային (ըստ Սեբաստացու՝ անուն բային) վերադրում են յատկանիչը միայն եւ չեն հոլովում (ծանր, օշինդր)։ Այդ մասին նա դրում է. «Անուն բային եւ խնդիրն միշտ առ նոյն իր վերաբերին, թէ առ զանազանս»⁶² եւ բերում է վերոյիշեալ օրինակը։ Ուրեմն, ըստ քերականի, ծանր եւ դառն բառերը ածականներ են (որոշիչներ), որոնք ցոյց են տալիս քաղ եւ օշինդր անունների որակաւորութիւնը, սակայն տուեալ դէպքում դործածուել են որպէս ստորոգելիական վերադիրներ։

* * *

Հետաքրքիրն այն է, որ Սեբաստացին տալիս է խօսքի սովորական շարադասութեան կարգից տեղի ունեցող շեղումները։ Իրականում դրողը կամ խօսողը յաճախ խախտում է քերականների կողմից, կամ բանաւոր լեզուի մշակած ու սահմանած կարգը, եւ իր խօսքը կառուցում է ազատ շարադասութեամբ, այսինքն՝ չըրջուն ձեւով՝ լեզուին տալով բարեհնչունութիւն։ Ըստ մեր լեզուական օրէնքների՝ անուն բային պէտք է դրուի բայից առաջ (Պետրոս ուսանի գրեթեականութիւն)։ սակայն լինում են դէպքեր, երբ

բայն է առաջադաս դործածուում։ Կամ՝ բայի եւ անուն միջեւ մտնում են (միջադրին - Մ. Սեբաստացի) լրացումները՝ նախադրութիւններն ու խնդիրները, որոշիչն ու յատկացուցիչը, որի հետեւանքով՝ նախադասութեան այդ երկու գլխաւոր անդամները միմեանցից բաւականաչափ հեռանում են՝ մի դէպքում մէկ, մի այլ դէպքում՝ մի քանի բառերի ընդմիջումներով։ Օրինակներ.

ա) «Սեմեկապետն արքայի ի ձեռն զօրաւորաց բանից իւրոց հաճեցոյց զարքայն՝ շնորհել այսմիկ մահապարտի ըզկեան»։ Այս նախադասութեան մէջ սեմեկապետ ենթական բաւական հեռացել է հանցոյց ստորոգելալից։

բ) «Համեցուցանէր զարքայն ի ձեռն զօրաւորաց բանից իւրոց սենեկապետն արքային. եւ առնէր շնորհել զկեան այսմիկ մահապարտի»։ Այստեղ բայը (հաճեցուցանէր) դործածուել է առաջադաս, եւ տէր բային (սենեկապետն) նրանից բաւական հեռացել է⁶³։

Այս երեւոյթը, այսինքն չըջադասութիւնը նկատուել է նաեւ մեր վաղ շրջանի զարգացած մէջ։

(Շար. 5)

ՅԱԿՈԲ Մ. ՄԵԻԹԱՐԵԱՆ
(Աւագ դասախօս, Երեւան)

63. Մ. ՍԵԲԱՍՏԱՑԻ, նոյն տեղում, էջ 372։

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԵՒ «ՀԱՅ»

ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

ՀՈՌՄԱՅԵՅԻ ՔԱՆԻ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒ ՄՕՏ

(Շար. տե'ս «Բազմալեզ» 1968, ք. 1-3, էջ 45)

ՈՎԻԴԻՍ ՆԱՍՈՆ (ն. Բ. 43-18 յ. Բ.)

Atque aliqua ex illis cum regum nomina
quaeret,
quae loca, qui montes, quaeve ferantur a-
[quae,...
omnia responde.²³

Թարգմանաբար՝

Իսկ եթէ մին անոնցմէ քեզ անուններն հարցրնէ՝
Արեւմտեան, վայրերուն, կամ լեռներուն, գետե-
րուն,
Որոնք այնտեղ պատկերներով կը ցուցուին,
Պատասխանէ՛ր թոյրին։

Ու կը շարունակէ նկարագրել.
Hic est Euphrates praecinctus harundine
frontem;
cui coma dependet caerula, Tigris erit
Hoc facito Armenios;²⁴

Թարգմանաբար՝

Եփրատն է այս, աղբիւրաշատ, եղեգնապատ.
Միւսը՝ որմէ կապոյտ վարսեր կը հոսին՝
Տիգրիսն, ուրեմն, ըլլայ պիտի.
Ըսէ՛ր՝ Հայերն եմ ասոնք։

Ովիդիոսի յորդորը խառն է կատակով,
հեղինակն եւ սկեպտիկ (տող 228)

si poteris vere; si minus, apta tamen.

Այսինքն՝ եթէ կրնաս, պիտի ըսես ճշ-
-

1. Մեղամաղձոտ, մեղանոյժ ու եղերեր-
զատէր Տիրուլլոսէն, փոթորկալից եւ մը-
տատանջ Պրոպերտիոսէն անցնինք սկեպ-
տիկ ու սրամիտ Ովիդիոսին։ «Արուեստ
սիրելու» (Ars amatoria) քերթումին
Ա. զրքին մէջ²¹, Ովիդիոս կը խօսի վա-
րերու եւ պարագաներու մասին՝ ուր կա-
րելի է սիրոյ թակարդներ լարել (ubi re-
tia ponas)․ կը թուարկէ ու կը նկարա-
գրէ կրկէսը, թատրոնները, փորումը,
հրապարակները, եւ կանգ կ'առնէ գլխա-
ւորապէս կայսերական յաղթանակի շքեղ
հանդէսներուն զիմաց, որոնք տեղի կ'ու-
նենային պատերազմներէ ետք։ Բնակա-
նաբար, ակնարկը՝ այդ ժամանակ, արե-
ւելքի մէջ, Պարթեւներու գէմ մղուող
պատերազմներու մասին է։ Գիտենք թէ
այս պատերազմներուն մէջ յաճախ խառ-
նուած էին Հայերն ալ․ ծանօթ է արդէն
թէ «Հայ ժողովուրդը շատ մը հասարա-
կաց կէտեր ունէր բարուց եւ կրօնից մէջ՝
Պարթեւաց հետ»²²։

Ովիդիոս, մանրամասնելով, կ'ըսէ թէ
կայսերական փառատօներու ընթացքին՝
օրիորդներ սիրաշահելու լաւ միջոց է ա-
նոնց բացատրել պարտուած թագաւոր-
ներու անունները եւ գրաւուած երկիրնե-
րը, որոնք պատկերներով նկարագրուած
ու ներկայացուած կ'ըլլային՝ յաղթանա-
կի հանդէսներու ընթացքին․

21. OVIDIO, «L'arte dell'amore», a cura di
G. Vitali, Zanichelli, Bologna, 1965.

22. ԱՍՏՈՒՐԵԱՆ, անդ, էջ 162։

23. OVIDIO, անդ, էջ 30, տող 219-221։

24. OVIDIO, անդ, էջ 30, տող 223-225։